

ասոնց միսը առողջարար ու Լըրոպիոյ խողերէն աւելի աղէկ է : Չի ու էշ խիստ քիչ կը գտնուին : Լոյնպէս ոչխարը այնչափ սովորական չէ . իսկ այծերը ազատ կ'ապրին : Փիղը նշանաւոր է իր բրած ծառայութեանցն համար , որն որ կը գործածեն բեռ տանելու , բան քաշելու , և ինչուան հեծնալու համար ալ :

Բադ ու հաւի տեսակ թռչունները քիչ են , և չգտնուիր ոչ սագ , ոչ հընդ կահաւ և ոչ սիրամարդ . իսկ ընդհանրապէս ասոնց տեղը որսի թռչուններ բազմութիւն են :

Չկան որսը մեծ շահի աղբիւր մըն է Սիամի ժողովրդեան . որովհետեւ բաց 'ի ծովափունքներէն' գետերու մէջ ալ արտաքոյ կարգի բազմութեամբ ձուկ կայ : Սիամի ծովածոյին մէջ կը գտուին պղտիկ կէտեր , ծովային խողեր , դլփիններ , և ուրիշ մեծ տեսակ ձկներ : Եւ ծովու և թէ ցամաքի կրիաները շատ կ'ախորժին ու շատ կ'որսան Սիամացիք : Մասնաւոր ձկնարաններ ալ ունին , որոնց մէջ կը չորցընեն ու կը պահեն ձկները :

Ինչուան հիմա բոլոր ըսածնուս բովանդակութիւնն ընելով , Սիամի թագաւորութիւնը՝ ճարտարարուեստ ժողովրդեան մը պատկերը առջնին կը ներկայացընէ , որն որ մեծ յոյս կու տայ առաջ երթալու , որովհետեւ քանի մը տարիէ 'ի վեր է որ գովելի ջանք մը կը ցուցընէ իր բարբարոսութենէն դուրս ելելու : Երբէք է որ 1835էն սկսեալ Սիամացիք և մէջերնէն խել մը ազնուական հարուստներ՝ Լըրոպացուց նաւերուն ոճով նաւեր շինեցին , և յաջողեցան ալ : Դարձեալ քիչ ատեն է որ սիամացի իշխան մըն ալ շողենաւ մը շինել տուաւ , որ հիմա մեծամեծ ծառայութիւններ կ'ընէ Սէ-Լյամ գետին վրայ : Բաղնայի գրուածքը , զոր մասնաւորապէս պէտք է կարդալ Սիամի ժողովրդեան բարոյսական վիճակին վերայ , աւելեալութիւն ունենալու համար , կը հաւաստէ մեզի որ Սիամացիք արքունեաց մեծամեծներէն ու թագաւորա-

կան ընտանեաց իշխաններէն շատը ամենայն կերպով հմուտ են եւրոպական գիտութեանց , և թէ ծանօթ է իրենց այն ամէն մեծամեծ ու վեհ գիւտերը , որոնք Լըրոպացուց անխոնջ ջանիցը արդիւնքն եղան :

Սոդոմոնեան արշիպելագոս :

Ուկիանիայի ընդարձակութեւ մէջ տարածուած կղզեաց բազմութիւն խումբերէն մէկն ալ Սոդոմոնեան արշիպելագոս ըսուածն է , որ տասնի չափ մեծ ու բազմամարդ կղզիներ ունի և խել մըն ալ պղտի կղզիներ , և զորոնք գտած է 1567 տարւոյն Սէնտանա սպանիացին : Լըրկայնութիւնը 200 գաղղիական փարսախ է արեւմտեան հիւսիսէն դէպ 'ի արեւելեան հարաւ , իսկ իր միջին լայնութիւնը գրեթէ 40 փարսախ :

Եւս արշիպելագոսին կղզեաց մէջ ծանօթագոյնքը Մասթրը ըսուած կղզեաց խումբն է , որոնց իւրաքանչիւրը մասնաւոր գլուխներէ կը կառավարուի , և ամենուն միանգամայն կը տիրէ մեծագոյն իշխան մը : Եւսնց բնակիչքն , որոնք չգիտցուիր թէ ինչ կրօնք ունին , ընդհանրապէս բարձրահասակ են , բարեկազմ , ուժեղ և արագաշարժ . մորթութիւնն այնչափ սև չէ . մաղերնին թեթեւ մը գանգուր . կորնթարդ ճակատ ունին . մեծ , սև ու փայլուն աչուրներ . ակռանին ալ ճերմակ : Իրենց կերպարանքին վրայ վայրագութիւն մը դուրս կը ցատքէ՝ խառն ընդ քաջասրտութե , որուն աւելի ուժ կու տայ մարմիննին գոյնգոյններկելը :

Եղեղն , նետ , նիզակ , լախտ , ասոնք են իրենց գլխաւոր զենքերը : Եղեղները գոգոյի ծառի փայտէն կը շինեն՝ եօթն ոտք երկայնութեամբ . ասոնք նշանաւոր են թեթեւութեան , ուժի և առաջգութեան կողմանէ : Եւսն ծառին կեղևովը կը յօրինուին լաքերը . և նետերն ալ ամենանորբ պղտի եղէգներէ կը շինեն . երկայնութիւննին հինգ ոտք



Բնակիչ Մասագրի

է, և ծայրերնին սաստիկ կարծր փայտէ է: Երկազակներն ալ գոգոյի փայտէն են, և տասնըհինգ ոտք երկայնութիւն ունին, և ընտիր քանդակներով զարդարուած են:

Վանայք ալ էրիկ մարդկանց պէս բարձրահասակ և բարեկազմ են: Սարկեշտութիւնն ու հաւատարմութիւնը

մեծապէս կը փայլի իրենց վրայ. և իրենց էրիկներն ալ անանկ վրէժխնդիր են այս կողմանէ, որ պարզ կասկածով մըն ալ անգթաբար կը սպաննեն զիրենք: Երկազակներն միայն քանի մը գլուխաւորաց քով կը տեսնուի. ուրիշ բոլոր կղզեցիքը մի միայն կին ունին: Սակայն այս կղզեաց բնակիչներուն մէջ ալ կայ



Բնակիչ Վանիքորոյի

այն գէշ սովորութիւնը, որ տղոցմէ ու մանք կը սպաննեն՝ եթէ շատուոր զաւակ ունենան :

Բնակիչներէն ոմանց զգեստը գոգոյի ծառի թելերով հիւսուած սիւսածանելիք են . բայց մեծ մասը հասարակաբար մերկ են, և զարդեր ունին միայն, ինչպէս են փետուր, խեցի, ոսկր, ձրկան ակօւաներ, որոնցմով կը ծածկեն իրենց քիթը, աչուրները, ականջները,

վիզը, մէջքը, թւերը, դաստակները, սրունքներն ու ոտից կոճերը : Իսկ գրեթե խաւորք կը զանազանուին կարմիր փետուրներէ շինուած վարսակալով մը, որ իրենց ճակատը կը բոլորէ :

Տուները ամենապարզ կերպով շինուած են, պատերը պամպուկէ, իսկ յարկը գոգոյի տերեւներէ : Իրենց նաւակները (բէրօկ) շատ թեթեւ են, երկայնութիւննին գրեթէ 20 ոտք է,

լայնութիւննին՝ 12, և խորութիւննին 2 ոտք : Այնց թիերը Բախայ կ'ըստին ու գոգոյի փայտէ են . լայն են 6 բթաչափ, և երկայն 4 ոտք :

Վանիքորոյ կամ Լաբերուզ ըստած կղզեաց խումբը :

Վանիքորոյ կղզեաց խումբը գտած է անցեալ դարուն 1 արեւուզ գաղղիացին, և թշուառաբար հոն նաւակոծելով կորսնցուցած է իր կեանքը : Վանիքորոյի բնակիչքը ընդհանրապէս պղծտիկ, նիհար, և տգեղ են կերպարանքով . երկայն ու նեղ է ճակատնին, որով վայրենի երևոյթ մը կ'առնեն . քի-

թերնին տափակ է, և թէպէտ փայտի կտորուանք կամ խեցիներ կ'անցընեն ոնգաց մէջտեղի եղած խտրոցէն, սակայն ասոնք գեղեցկութիւն մը չեն տար անոր : Վրեթէ ամէնքն ալ արագաչարժ, ճկուն ու դիւրաթեք են . և սովորաբար բորոտութիւն ու խոցերու հիւանդութիւն միայն կը գտնուի մէջերնին : Տարեց մարդկանց գլուխը մերկ է ու կարճ մազեր ունին : Վանայք աւելի տգեղ են քան էրիկ մարդիկները . բայց այս յետինները ամէն ջանք կ'ընեն որ օտարականք չտեսնան իրենց կնիկները :

Վր հաստատեն Վանիքորոյացիք թէ իրենց մերձակայ տեղացիքը մարդակեր



Բնակիչ և իշխան Վանուի (ի Վանիքորոյ)

չեն . միայն կ'ըսեն թէ՝ երբոր թշնամի մը անոնց ձեռքն իյնայ, անմիջապէս մէկէն կը սպաննեն . ծովու ջրի մէջ կը գնեն իր մարմինը, և այնչափ ատեն կը պահեն անոր մէջ՝ ինչուան որ մարմինը բոլորովին քայքայելով ոսկրները միայն մնան . այն ատեն դուրս կը հանեն կը մախըր, կը քերեն ոսկրները ու այլ և այլ ձևերով կը կտրեն զանոնք՝ նետերու ու նիզակներու սուր ծայրերը շնեւոր համար :

Վանիքորոյացւոց, զէնքերն սլ լախ-

տեր, նիզակներ, աղեղն ու նետ են . այս վերջիններս թունաւորած կ'ըլլան միշտ կարմրագոյն խիժով մը, որն որ կը հանուի տեսակ մը ծառէ՝ որ Վանիքորոյ կղզեաց յատուկ է : Արբար մարդու մը մէկ անդամը կը վիրաւորուի թունաւոր նետով մը, մէկէն ի մէկ կը կտրեն այն անդամը, և առանկով երբեմն կրնան խալըսել զվիրաւորուողը . բայց երբոր վէրքը մարմնոյն այնպիսի մասին վըայ է՝ որ դիւրաւ չեն կրնար կտրել, վիրաւորուողը առանց ամենեւին

տրտնջելու կը սպասէ մահուան , թէ պէտ է շատ անգամ չորս կամ հինգ օր անհաւատալի տանջանքներով կը տապնապի :

Եղուի վրայ գալով՝ Սանիքորոյացոց լեզուն քաղցր է ու ախորժելի աւանջաց :

Երեւնտի կամ Սանդա-Գրուսի , Դոքուս , Դինաքորոյ և Մենտամա կղզեաց խումբը :

Երեւնտի կամ Դնտէնի կղզին , զոր Սէնտանա Սանդա-Գրուսի անուանեց , հարաւային լայնութիւն $10^{\circ} 40'$ և $10^{\circ} 53'$ մէջտեղ կ'իյնայ , և արեւելեան երկայնութեան $163^{\circ} 22'$ և $163^{\circ} 45'$ մէջտեղ : Բազմամարդ է ըստ բաւականին . իր բնակիչներէն շատը սև են , տափակաքիթ , գանգրահեր և լայնաճակատ . և կազմուածքով ալ ուժեղ են : Խիստ աղքատմանք կը զանազանութիւն իրենց ձիթագոյն մարմնովը , որ բոլորնեղեան ցեղին կը մօտեցնէ զասոնք : Բոնք այն նմանութիւնն ալ ունին յիշատակեալ ցեղին հետ , որ անոնց պէս քիթերնէն ու աւանջներնէն կրիայի պատեանէ շինուած օղակներ կը կախեն : Աղղեցիքը կը զարդարեն նմանապէս գլուխին կարմիր ծաղկով մը . և իրենց ապարանջաններուն ու գօտոյն մէջ տեսակ տեսակ անուշահոտ բոյսեր կը դնեն : Սարմինին գոյնգոյն կը ներկեն , և թլիաթութիւնն ալ հասարակաց սովորութիւն է իրենց մէջ :

Դուբուա կղզին բարձր է ծովուն երեսէն , և իր տարածութիւնն ըստ հաւանական կարծեաց $10-12$ մղոն է . հարաւային լայնութեան $11^{\circ} 16'$ վրայ կ'իյնայ , և արեւելեան երկայնութեան $164^{\circ} 7'$: Բազմամարդ է , և բնակիչքը աղնիւ ու հիւրասէր են :

Խիստ Սէնտանա ու Դինաքորոյ կղզեաց վրայ մասնաւոր գիտնալու արժանի տեղեկութիւն մը չկայ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կերպով կեդրոնը Հոմայ քաղաքացի կրակ :

Եկից գրեթէ 1652 տարի առաջ՝ ան հռոմէական ճամբուն երկայնութեան վրայ , որ () գոստոսի հրամանաւ շինուեր էր Խոնէն ինչուան Սէնդ , բազմութեան մը ոտնաձայն կը լսուեր : Երևուն լոյսէն կը շողային ողորկ պողպատէ շինուած աղեղունք , տէգեր , զրահներ , փառաւոր ցցունքներով սաղաւարտներ . և ասոնցմէ աւելի բարձր՝ կը փայլէին օդուն մէջ հռոմէական արծիւները , որ ամենուն սրտին վրայ սարսափ մը կը ձգէին :

Սակայն աս պատերազմական երևոյթը թշնամեաց բանակի նշան մը չէր : Բազդիա երկու դարէ 'ի վեր հռոմէական գաւառ դարձած ըլլալով՝ կը սկսէր նոր կեանք մը ստանալ իր յաղթողներուն դրած կարգադրութեանց ձեռքովը : Սեծամեծ կայսերը ինսամբ ցուցուցեր էին այս երկրին . իրեն տիրող աշխարհակալը Սեսար՝ իբրև քաջաց աշխարհք մը կը սիրէր զԲազդիա . () գոստոս հոգ կը տանէր անոր վրայ , որովհետև անիկայ կայսերութեան համար ամուր պատուար մըն էր ընդդէմ այն բարբարոսաց , որ հռենոսի ափանց վրայ բանակած էին . Բրիտանոս հոն պտրտելու ատենը՝ քաղաքներ հաստատեց , յիշատակարաններ կանգնեց , հարկերը վերուց , և ձեռքէն եկածին չափ ամենայն կերպով ջանաց հասարակաց բարեբաւոթութեանն օգնելու . Բնտոնինոս Պիոս և Սարկոս Երեւիոս ալ նոյն գութն ունեցան Սեղտաց վրայ :

Բողովուրդը հետաքրքրութեամբ վառուած՝ ամէն կողմերէ կը վազէր դէպ 'ի քաղաքները այս տեսարանը նկատելու համար . բազմութիւն բազմութիւն վրայ կը դիզուէր , և ամենուն աչքը դէպ 'ի հոն կը դիմէր , ուր որ խուռն նիզակներ բոլորած էին չքեղ գահաւորակ մը , զոր գերիները կը տանէին :